ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-743[1] -14.12.2023-ՄԻ-011/0) վերաբերյալ ներկայացված առաջարկների

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի(հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	Հեղինակ	Նախագծի 1-ին հոդված	1-ին հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրություն. «2021 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 71-րդ հոդվածի 1-ին մասի՝»:	Ընդունվել է, անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է:
2	Հեղինակ	Նախագծի 9-րդ հոդված	9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.՝ «3. Սույն	Ընդունվել է, անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է:

			հոդվածի 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝ 1) հղի կնոջ նկատմամբ, 2) անչափահասի նկատմամբ, 3) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվողի նկատմամբ, 4) հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձի նկատմամբ, 5) մերձավոր ազգականի, զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ կողմից՝ պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ,		

			կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:»:		
3	Հեղինակ	Նախագծի 12-րդ հոդված	12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Օրենքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 1. 9-րդ կետի «կրոնով,» բառից հետո լրացնել «սեռով,» բառը:»:	Ընդունվել է, անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է:
4	Հեղինակ	Նախագծի 21-րդ հոդված	Նախագծի 21-րդ հոդվածի վերնագրում լրացնել	Ընդունվել է, անհրաժեշտ	Ընդունվել է:

			«Եզրափակիչ մաս» բառերը:	փոփոխությունը կատարվել է:	
5	Հեղինակ	Նախագծի 1-ին, 6-րդ, 7-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 21-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին, 6-րդ, 7-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 21-րդ հոդվածների համարակալումը խմբագրել, մասնավորապես՝ «1.» և «2.» թվերը փոխարինել «1)» և «2)» թվերով:	Ընդունվել է, անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է:
6	Հեղինակ	Նախագիծ	Նախագծի լրամշակման արդյունքում հոդվածների համարակալումը վերախմբագրվել է:	Ընդունվել է, անհրաժեշտ փոփոխությունը կատարվել է:	Ընդունվել է: